Տախտակի մի կողմը (խաչեցեալի աջ) աբեգակն է ճառագայթներով՝ առասպելական թռչունի մէջքին, զարդերի հետ հիւսուած «արեգակն» ելնդաւոր վերտառութեամբ, իսկ միւս կողմը լրացած լուսին՝ եղջերուի մէջքին «լուսին» վերտառութեամբ։ Խաչի անկիւնից մի աջ հայկական օրհնութիւն է տալիս, տակը նման տառերով «աջ ՀՆ» գրուած. սորա տակ մի աղաւնի լուսոյ պսակով և «հոգի ՀՅ» վերտառութեամբ։ Խաչեցեալի գլխին «ՅԻՍ ՔԻՍ», իսկ խաչի հորիզոնական թևերի վերայ «ձեռք ՍՐ զերկինս ար ար ին տ/արածեցեր ի խաչիս» խորաքանդակով։ Խաչուած Յիսուսն ունի կարճ մազեր և երկճիւղ մորուք. բոլորակ նիմբուսի վերայ խաչի նշան. մերկ է և միայն ամօթանքը ծածկուած սփածանելիքով. աջ թևը պոկուած է և կախուած, որ բռնած, համբուրում է մի կանացի ֆիգուր, բոլորակ լուսոյ պսակի վերայ «ՀՈԳԱԾԻՆ» գրած։ Նա հագել է մինչև ոտները հասնող ըզգեստ, գլխին և ուսերին ձգուած է լաչակ, ծնոտի տակից կապ անցկացրած։ Խաչեցեալի միւս կողմից կանգնած է մի այլ ֆիգուր, նիմբուսի վերայ «Յովհաննէս» գրրուած. դէմքը եղծուած է, ինչպէս և ֆիգուրի առաջին կողմը, բայց երևում է, որ ուսերին տոգայ ունի ձգած, ուրեմն և սովորական զգեստաւորութեամբ և գիրքով։

Աւելի ներքև, աջից կանգնած է մի այլ ֆիգուր, երկար զգեստով, լաթի գօտին մէջքին կապած, ձեռքերը վեր բարձրացրած, աղօթողի գիրքով, գլուխն էլ վեր ուղղած՝ երգում է «սՔ ՀԱԾ», որ ելնդաւոր և գեղեցիկ տառերով գրուած է արմաւենիկի զարդաքանդակների եւ ցօղունների մէջ, Յովսէփ Արիմաթացին է. նորա գիմաց Նիկոդիմոս։ «ՍՔ ՀԱԾ»ի չարունակութիւնը՝ «սՔ ԵՒ» գրուած է Յիսուսի ոտքերի մօտ, իսկ մնացածը «հպաւ սՔ ԵՒ անմահ որ խաչեցար ողորմեա պարոն Մամիկոնին» ոտքերի տակ, խորաքանդակ։ Խաչի մակերևոյթը ծածկուած է արմաւենիկի և ցօղունների հիւսկէն զարդարանքով, իսկ լուսնի և արեգակի մօտ, ելնդաւոր գծերի հիւսուածքով(1)։

Պատուանդանի մնացորդի վերայ նկատւում է մի ձիաւոր, որ աջ ձեռքով նիզակը շամփրել է իւր վերայ յարձակուող վագրի բերանի մէջ, թեքուած դէպի առաջ. դէմքը եղծուած է, բայց երևում է միրուքը. բարձր գլխարկը անորոշ ձևակերպութեամբ, հաւանօրէն նման Զաքարէի և Իւանէի գլխարկին (տե՛ս մեր Խաղբակեանք, չապկի նկարը). հագել է մինչև ծնկները հասնող երկար զգեստ, կողքից կախուած է երկար թուրը, որի երկրորդ կէսը՝ դէպի ծայրը՝ եղծուած։ Նկատելի է մասամբ ձիու զարդարանքը՝ կրծքի և ազդրների վերայ. ձիու պոչը կիսից հանգոյց արած։ Պատկերաքանդակը իւր ամբողջութեամբ յիշեցնում է սասանեան ձիաւորը, որ արձանը կանգնող Մամիկոնն է, Գրիգորի և Մամքանի որդին. Սաչիգովսկին սխալմամբ նոյնացրել է Վարդան մեծ Մամիկոնեանի հետ։ Դիմացի վագրը մի թաթը բարձրացրել է դէպի ձիաւորը. եղծուած է գլխի մասը, բայց նկատելի են բաշը, անդամների գծագրութիւնը և մէջքի եռակի շերտերը։ Պատկերաքանդակի վերև գրուած է խորաքանդակ. «Մամիկոն ծառա ՀՅ կանկնե/ցի զամենափրկիչս ի բարէ — ներքևի գարնէզի վերայ — խաւսութ»։ Մի ընկած քարի վերայ նկատւում է թուականը (պարզ. 38) դէպի ձախ բոլորակի մէջ առնուած. «ի թվիս (վերջին տառը գուցէ և 6) ՁԻԸ»(1)։

Այժմ տեսնենք ո՞յք են խաչարձանի կանգնող Մամիկոնը և նորա ծնողները Գրիգոր և Մամքան։ Այս հարցի պատասխանը որոշելու նպաստում են մի քանի արձանագրութիւններ, որ գտնւում են Վեղիի վերին ակունքների նոյն շրջանում, ուր մեր յուշարձանն է։ Վեղին այստեղ կազմուած է երկու մեծ վտակներից, որոնք բղխում են Ջղինի և Ճերմանիսի ձորերից և խառնւում իրար պատմական Ուրձում, ներկայ անուանակոչութեամբ Քեչիչքենդ կամ

(1) Strzygowskiն մեզնից ստանալով լուսանկարը եւ հարկաւոր տեղեկութիւնները արձանագրութիւնների հետ, հրատարակել է Die Baukunst der Armenier աշխատութեան մէջ, եր. 259. սխալմամբ Յովսէփի եւ Նիկոդիմոսի պատկերների համար գրում է. «links eine gestalt mit dem Haupte Johannes des Täufers. rechts Josef»։

(1) Այսպիսի կենցաղական իշխանական պատկերագրութիւնների մասին տե՛ս Orbeli Bitowie reliephi եւն. SP. 1915. Ottisk is sapissok Woct. Otdel. imp. apx. O-Wa։ Մեր Խաղբակեանք եւն. եր. 82. 55։